համոզեն գնալ բնակութիւն հաստատել Մազանդարանում եւ Գիլանում, սակայն Հայերը "լսել անգամ չէին կամենում այդ մասին"։ Դրանից պէտք է ուրեմն հետեւեցնենք, որ Մազանդարանը եւ Գիլանը գրաւելու րոպէին, 1723 թ., այդ երկրներում Հայեր չկային, բայց այն ժամանակ ինչո՞վ բացատրել Մովսէս առաջնորդի կոնդակը։ Եթէ ենթադրենք որ այդ կոնդակը իբրեւ օրհնութեան կոնդակ գրուել է 1706 թ., երբ նա առաջնորդ ընտրուեց եւ միեւնոյն ժամանակ ընդունենք, որ 1723 թ. երբ Մեծն Պետրոս գրաւեց Մազանդարանն եւ Գիլանը, այդ երկրներում Հայ չկար, պէտք է ուրեմն գալ այն եզրակացութեան, որ այդպիսի մի կարճ ժամանակամիջոցում (1706—1723 թ.) Հայերը գաղթել եւ տեղաւորուել էին ուրիշ տեղեր կամ ոչնչացել էին։ Այն հանգամանքը որ այսօր եւս Մազանդարանի եւ Գիլանի զանազան տեղերում — Անզալիում, Բաշտում, Աստարաբատում, Մեշեդիսարում, Քանարա գեղում Հայեր են գտնւում, չէ կարող որեւէ նշանակութիւն ունենալ, որովհետեւ այդ Հայերը նոր ժամանակի եկւորներ են Անդրկովկասի զանազան տեղերից — Ագուլիսից, Ղարաբաղից՝ վաճառականութեան նպատակով։

Ղազվին քաղաքի եւ նրա Հայերի մասին Շարդէն գրում է 1673 թ. "Ղազվինը բաղկացած է 12.000 տներից, նա վեց հազար աշտարակ ունի եւ 100.000 բնակիչ, որոնց մէջ պէտք է հաշուել 40 քրիստոնեայ եւ 100 հրեայ ընտանիք, ամէնքը շատ աղքատ։ Եւրոպական աշխարհագիրներից